ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 դեկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

182
(2848)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԳՆԱԼՈՎ ԹԵԺԱՆՈՒՄ Է

Երեւանի ավագանու խմբակցությունները պատրաստվում են ավագանու տարեվերջյան կարեւոր նիստին: Ինչպես հայտնել ենք, Երեվանի նոր ձեւավորված ավագանին դեկտեմբերի 26-ի նիստում քննարկելու է համայնքի 2024թ.-ի բյուջեն եւ զարգացման ծրագիրը:

Բյուջեն եւ զարգացման ծրագիրը ներկայացնելու է քաղաքապետը, հաստատելու՝ ավագանին:

Ի տարբերություն խորհրդարանի, որտեղ ՔՊ-ն մեծամասնություն է եւ ցանկացած որոշում կայացնում է միանձնյա եւ առանց խոչընդոտի, ավագանիում ՔՊ-ն լուրջ խնդիրներ ունի:

Բանն այն է, որ ընդդիմադիր երեք խմբակցությունները միասին ունեն 34 մանդատ, իսկ ՔՊ-ն եւ նրանց հետ կոալիցիա կազմած «Հանրապետություն»-ը՝ 33:

Այսինքն՝ դեկտեմբերի 26-ին ամեն բան կախված է ընդդիմությունից. եթե չգնան ու չհաստատեն բյուջեն, ապա լուրջ խնդիրներ կառաջանան ՔՊ-ի համար Երեւանի կառավարման հարցում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ավագանու ֆրակցիաներն այս օրերին թեժ քննարկումներ են անում, հատուկ ֆինանսական խմբեր են ձեւավորել, որպեսզի ուսումնասիրեն բյուջեն ու, ըստ այդմ, որոշում կայացնեն՝ գնում են նիստին, ինչպես են քվեարկելու այդ օրը:

Առաջիկայում նաեւ ավագանու ֆրակցիաները նիստեր կանեն ու վերջնական որոշում կկայացնեն այս մասով:

Ինչպես մեզ փոխանցեցին, ընդդիմադիր խմբակցությունները մտադիր են միասնական որոշում կայացնել ու մեկ ճակատով այդ օրը հանդես գալ:

Հավելենք, որ երեկ «Մայր Հայաստան» դաշինքը հայտարարել էր, որ Երեւանի իշխանությունները՝ ՔՊ եւ «Հանրապետություն» կոալիցիան, որոշել են կտրուկ թանկացնել մի շարք տեղական տուրքեր եւ վճարներ, այդ թվում՝ կարմիր կետագծերով առանձնացված ավտոկայանատեղիները:

Ընդդեմ այս թանկացումների նրանք երեկ ակցիա իրականացրին:

«Ժողովուրդ» օրաթերթը ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամներից հետաքրքրվել է՝ պատրաստվում են արդյոք այս թանկացումները զսպող ու ավտոկայանատեղիների համար նախատեսված վճարները կարգավորող նախագիծ բերել ավագանու նիստին: Մեզ ասացին, որ դեռ նման քննարկում չեն ունեցել, մասնակցության եւ օրակարգի հետ կապված հարցերը քննարկելու են խմբակցության առաջիկա նիստին:

ՀՀ Ազգային ժողովը 2023 թվականի ընթացքում էլեկտրոնային աճուրդ եւ «Գնանշման հարցում» գնման ընթացակարգերով ձեռք է բերել կահույք, խորհրդակցությունների սենյակի կահույք եւ ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար փափուկ կահույք: Նշված գնումների գործընթացների արժեքը կազմել է 7 մլն 810 հազար դրամ: Սրան զուգահեռ «Ժողովուրդ» օրաթերթն արձանագրեց, որ Ազգային ժողովի 334 սենյակի կահույքը գտնվում է անմխիթար վիճակում: Նիստերի սենյակի սեղանները քերված են, մաշված, աթոռները՝ հնամաշ, քանդված կարերով: Եւ ստացվում է, որ Ազգային ժողովը զվարճանքների եւ տուրիստական այցերի համար պետբյուջեում միլիոններ ունի, սակայն 334 սենյակը մաշվում ու մաշվում է: ArmLur.am-ը գրել էր, որ ԱԺ-ի բակում սրճարան է կառուցվում, ընդ որում՝ ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանի ցուցումով դեկտեմբերյան ցրտին սալիկապատում են սրճարանի ճեմուղին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահները քննություն են սկսել Կենտրոն վարչական շրջանում գտնվող արժեքավոր բնակարանների՝ կեղծ փաստաթղթերով վաճառելու, գնորդից գումարը հափշտակելու դեպքերով: Մասնավորապես, պարզվել է, որ մեծամասամբ զոհ են դառնում երկար ժամանակով չբնակեցված բնակարանները: Չարագործները, տեղեկանալով, որ բնակարանները տարիներով փակ են, բնակարանով զբաղվողները երկրում չեն, կեղծ լիազորագրեր են սարքում, որոնցով կազմակերպվում են առուվաճառք: Գնորդից ստանում են գումարը, անհետանում՝ թողնելով կեղծ փաստաթղթերի եւ փակ դռների առջեւ: Ավելին՝ ամենացավալին այն է, որ այս հանցավոր խմբին չեն կարողանում բացահայտել իրավապահները: Բայց սա դեռ վերջը չէ. հարուցված քրեական վարույթի շրջանակներում հարցաքննվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմավարական պլանավորման վարչության նախկին պետ գեներալ Գենադի Տավարածյանի որդին, որը եւս ներգրավված է եղել այդ գործարքների մեջ:



ՀՀ ներքին գործերի նախարարությունը 753 հազար 150 դրամ արժողությամբ գինիներ եւ կոնյակներ է գնել: ՆԳՆ-ն ներկայացրել է տեխնիկական բնութագիր. կոնյակները եղել են 20 տարի հնեցմամբ «Նաիրի» կոնյակ (12 հատ): Գինիները, սակայն, «Ջորահ ոսկի» պետք է լինեն եւ պատրաստված լինեն 50% Ոսկեհատ եւ 50% Գառան դմակ խաղողի տեսակներից 2 հատ: Հաջորդ գնումը կատարվել է 10 տարի հնեցմամբ «Ախթամար» կոնյակի ձեռք բերման համար: Ըստ տեխնիկական բնութագրի՝ կոնյակի գույնը պետք է լինի հիասքանչ սաթյա գույն, որն ունի պղնձային գունախաղ, բույրը՝ աշխույժ եւ նրբագեղ: Կոնյակների քանակը 12-ն է: Ձեռք է բերվել եւս 10 կարմիր կիսաչոր գինի՝ «Կարաս» ապրանքանիշի: 20 տարվա հնեցմամբ 3 հատ «Նաիրի» կոնյակը ՆԳՆ-ի համար արժեցել է 105 հազար 750 դրամ: Գնումները կատարված է մեկ անձից գնման ընթացակարգով «Ագուլիս-Մեկ» ՍՊԸ-ից: ՀՀ հանրային իշխանությունները սովորություն են դարձրել կոնյակներ գնելը, այն էլ՝ ոչ թե արտադրողից, այլ այն կազմակերպությունից, որը վերավաճառում է խմիչքները, ինչպես, օրինակ, «Վինո-Վինո» ՍՊԸ-ի դեպքում է: Հավելենք նաեւ, որ խմիչքներ գնելու դեպքում, եթե գնում կատարվեր հենց արտադրողից, գուցե ավելի էժան կլիներ նախարարության համար:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵ

«ՍԱԼԻԿՆԵՐ ՓՈԽԵԼՆ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ՉԷ». Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դեկտեմբերի 26-ին Երեւանի ավագանին հերթական նիստն է անելու: Օրակարգում, ի թիվ այլ հարցերի, Երեւանի 2024թ.-ի բյուջեն եւ զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու հարցն է լինելու: Համայնքի բյուջեն ներկայացնում է համայնքի ղեկավարը: Ավագանու նիստին բյուջեն հաստատվում է ոչ մեծամասնական կարգով, այսինքն՝ նիստին ներկա ավագանու անդամների մեծամասնության քվեարկությամբ: ՔՊ-ն եւ նրանց հետ կոալիցիա կազմած «Հանրապետություն»-ը միասին ունեն 33 մանդատ, իսկ ընդդիմադիր խմբակցությունները՝ 34, այսինքն՝ բյուջեն հաստատելու համար իշխանությանն անհրաժեշտ է լինելու ընդդիմությունից մեկ ձայն ստանալ: ArmLur.am-ը այս առիթով զրուցել է ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանի հետ:

-Պարոն Գրիգորյան, ի՞նչ որոշում ունի ձեր խմբակցությունը, մասնակցելո՞ւ եք ավագանու նիստին, ինչպե՞ս եք քվեարկելու:

-Դեռ չունենք, բայց նախնական՝ բյուջեի մասով մեր վերաբերմունքը բացասական է. քննարկում կանենք եւ վերջնական որոշում կկայացնենք:

-Հակված եք բոյկոտե՞լ նիստը, թե՞ դեմ քվեարկել:

-Չեմ կարծում՝ կբոյկոտենք, ավելի հավանական է, որ դեմ կքվեարկենք:

-Ձեր խմբակցությունը ֆինանսիստների հատուկ խումբ էր ձեւավորել, որպեսզի ուսումնասիրեն բյուջեն եւ եզրակացություն ներկայացնեն: Պատրա՞ստ է արդեն բյուջեի մասով եզրակացությունը:

-Դեռ ուսումնասիրությունը չի ավարտվել, ուրբաթ օրը քննարկելու ենք այդ հարցը, բայց կարող եմ ասել, որ բյուջեի ծախսային մասը վիճահարույց է, քանի որ, մեր կարծիքով, կարեւորությունն առաջնահերթություններին տրված չէ, այսինքն՝ տրանսպորտի հարցի լուծում, սոցիալական խնդիրների լուծում, մանկապարտեզներում ու դպրոցներում առկա խնդիրների լուծում երկրորդ պլան են մղված: Շեշտը դրված է, օրինակ, փողոցի մայթերի սալիկները փոփոխելու վրա: Մենք անցել ենք այդ փողոցներով, սալիկներ փոխելն ավելի կարեւոր չէ, քան, ենթադրենք, դպրոցների ու մանկապարտեզների վերանորոգումը: Այսինքն՝ բյուջեի տրամաբանության հետ կապված խնդիրներ կան, խնդրահարույց կետեր կան:

-Ավագանու մյուս ֆրակցիաների հետ քննարկումներ անցկացրե՞լ եք բյուջեի մասով:

-Բյուջեի մասով քննարկում չենք արել, չգիտեմ՝ ինչ որոշում ունեն նրանք, բայց կարծում եմ՝ «Հանրային ձայն»-ը կգնա նիստին: Ես չեմ կարծում՝ նիստը տապալելու հեռանկար կա. սա իմ անձնական կարծիքն է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԵՂԾ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐ

Դեկտեմբերի 13-ին 2020-2023 թվականների գերեվարված Հայաստանի Հանրապետության 31 զինծառայողներ եւ սեպտեմբերին Արցախի Հանրապետությունում գերեվարված 1 զինծառայող հատել են հայ-ադրբեջանական սահմանը եւ գտնվում են Հայաստանում: Հայրենադարձված գերիների թվում էր 2023թ. օգոստոսի 16-ին գերեվարված Գագիկ Աշոտի Ոսկանյանը: Ձերբակալված Գագիկ Ոսկանյանին Ադրբեջանի գլխավոր դատախազությունը ներկայացրել է որպես «դիվերսիոն խմբի» անդամ եւ «խմբի» դեմ քրեական գործ է հարուցել մի շարք ծանր հոդվածներով՝ ներառյալ ահաբեկչության:

ՆՈՐ ԴԵՍՊԱՆ

Նախագահ Միշելը դեսպան Բալայանին մաղթել է հաջող աշխատանք պաշտոնում՝ կարեւորելով Հայաստան-Եվրոպական միություն գործընկերության առաջմղմանն ուղղված նախաձեռնությունները եւ վերահաստատելով իր աջակցությունը դրանց: Տիգրան Բալայանը շնորհակալություն է հայտնել բարեմաղթանքների համար եւ նշել, որ Հայաստանը հաստատակամ է գործադրել բոլոր հնարավոր ջանքերը՝ Եվրոպական միության եւ նրա անդամ պետությունների հետ գործընկերությունը որակապես նոր մակարդակի հասցնելու համար:

Հայաստանի երախտագիտությունը հայտնելով նախագահ Միշելին եւ կարեւորելով ԵՄ նախագահի անձնական ջանքերը Հարավային Կովկասում խաղաղության հաստատման համար՝ Բալայանը նաեւ ընդգծել է, որ Ադրբեջանի կողմից Բրյուսելյան ձեւաչափի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների կոպիտ խախտումները եւ համարժեք հետեւանքների բացակայությունը, ի վերջո, հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի լիակատար էթնիկ զտմանը: Ուստի, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Ադրբեջանի կողմից Արդարադատության միջազգային դատարանի՝ իրավական պարտադիր ուժ ունեցող բոլոր որոշումների կատարման եւ Բաքվին բանակցային սեղան վերադարձնելու ուղղությամբ:

Դեսպանը նախագահ Միշելին տեղեկացրել է Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի մեծացող հավակնությունների եւ խաղաղ գործընթացը խափանելու Բաքվի շարունակական փորձերի, այդ թվում՝ Գրանադայի բանակցություններին չներկայանալու իրական պատճառների եւ Բրյուսելում նախատեսվող բանակցությունների մասին:

Կողմերը մտքեր են փոխանակել նաեւ հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման եւ կոմունիկացիաների ու ճանապարհների ապաշրջափակման հնարավորությունների շուրջ: Այս համատեքստում դեսպան Բալայանը ներկայացրել է ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը եւ կարեւորել դրա ընդգրկումը ԵՄ «Գլոբալ դարպասներ» նախաձեռնությունում:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԽ ՆԻՍՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ:

Նիստին, բացի ԱԽ անդամներից, մասնակցել են նաեւ հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Նիստի ընթացքում քննարկվել են Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը, ՀՀ պարենային անվտանգության ապահովմանը, ՀՀ ՋՈՒ միասնական կառավարման ավտոմատացված համակարգին եւ ՀՀ անվտանգությանն առնչվող այլ հարցեր:

Ջեկույցներով հանդես են եկել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը եւ այլ պաշտոնյաներ:

«ՊԵՏՔ Է ԽԱՂԱՆՔ ՄԵՐ ԽԱՂԸ»

«Խաղաղության պայմանագիրը ՀՀ իշխանությունը փաթեթավորում է այնպես, որ 20-25 տարի հետո իմ թոռները պատերազմեն: Իրենց թվում է, որ գնում են խաղաղության, բայց դա խաղաղություն չի, պատերազմ է, ուղղակի այս սերնդից հետաձգում եք հաջորդ սերնդի վրա»,- «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նշել է Արցախի ԱԽ նախկին քարտուղար Սամվել Բաբայանը: «100 տարի առաջ ցեղասպանություն է եղել, եւ Հայաստանի ցանկացած նախագահ, որ փորձում է ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, նա դավաճան է դառնում: Գնում է արտասահման, լոլիկով ու ձվով խփում են: Այսօր էլ նույնկերպ Սփյուռքը գրեթե ամբողջովին արհամարհում է այսօրվա գործող իշխանություններին:

Ես ասում եմ՝ եթե Ադրբեջանում կան գրագետ, մտածող մարդիկ, որպեսզի մեր ժողովուրդները, որոնք 300 տարի իրար հետ կռվում են, եւս 300 տարի չշարունակեն կռվել, պետք է խաղանք մեր խաղը»,- ասաց Սամվել Բաբայանը:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ալավերդու համայնքապետարանում կայացավ աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցում էին համայնքապետարանի համապատասխան բաժինները: Համայնքի ղեկավարը խորհրդակցության սկզբում հատուկ շեշտեց այն հանգամանքը, որ համայնքապետարանը պատասխանատու շրջան է թեւակոխում, եւ սահմանված ժամկետներում ավագանու հաստատմանը պետք է ներկայացվի համայնքի՝ 2024 թվականի բյուջեն:

Քննարկվեցին քաղաքում աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքներին, չսահմանված վայրերում բացօթյա առեւտրին, հասարակական տրանսպորտի աշխատանքներին, համայնքապետարանի եւ առանձնացված ստորաբաժանումների կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման որակին առնչվող հարցեր, տրվեցին հանձնարարականներ համապատասխան բաժիններին: Անդրադարձ կատարվեց նաեւ համայնքապետարանի գործառույթներին վերաբերող այլ խնդիրների, եւ տրվեցին հանձնարարականներ դրանց լուծման նպատակով: Համայնքի ղեկավարը, կարեւորելով յուրաքանչյուր բաժնի դերը, առանձնացրեց քաղաքաշինության եւ հողաշինության բաժնին, որի աշխատանքը պետք է հիմնված լինի ինչպես արդյունավետության վրա, այնպես էլ պետք է պահպանի ու բարեկարգի համայնքի արտաքին տեսքն ու առանձնահատկությունները:

«Ո՛Չ ԹԱԼԱՆԻՆ»

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամները բողոքի եւ հանրային իրազեկման գործողություններ են իրականացնում Երեւանի փողոցներում՝ «Ո՛չ թալանին» կարգախոսով: Նրանք բարձրախոսով հայտարարում են, որ առաջիկայում երեւանցիներին սպասվում են տհաճ անակնկալներ՝ տեղական տուրքերի թանկացումներ, իսկ «Ասեք՝ կանենք» կարգախոսը, ըստ «Մայր Հայաստանի», իշխանությունները դարձրել են «Մենք կասենք, դուք կանեք»: Ավագանու անդամները հայտարարեցին, որ իշխանությունները խաբել են մարդկանց ամեն ինչի վերաբերյալ՝ տարրական կոմունալ ծառայությունից սկսած մինչեւ անվտանգային խնդիրներ. այս իշխանությունների օրոք թմրամոլությունն աճել է, Երեւանի կենտրոնը պատրաստվում են դարձնել հատուկ ընտրյալ եւ վճարունակ մարդկանց համար կայանատեղի, 5 անգամ խոստացել են կառուցել մետրոյի Աջափնյակ կայարանը, սակայն ոչինչ չեն արել:

«Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մանուկ Սուքիասյանի ձեւակերպմամբ՝ իշխանություններին թվում է, թե սովորական կրպակ աշխատացնողն ի վիճակի է մի քիչ ավել տեղական տուրք վճարել, բայց կազինոները չեն կարող. իշխանությունները խաբել են, որ էլեկտրաէներգիայի գինը կիջնի, ջուրն ու գազը չեն թանկանա, բայց բարձրացրել են, ասել են՝ կպայքարեն Արցախի համար, բայց Արցախը հանձնել են:

ՆԱՄԱԿ

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄՂՈՒՄԸ

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը հերթական հոդվածն է հրապարակել «Նուբարաշեն» ՔԿՀ-ից: Այն ներկայացնում ենք ստորեւ.

«Բելառուսի նախագահն օրերս հերթական բարձրագոչ հայտարարությունն արեց Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակի վերաբերյալ՝ փորձելով Նիկոլ Փաշինյանի համար «ալիբի» ապահովել Լեռնային Ղարաբաղի կորստի համար եւ հայ ժողովրդին պատուհասած ողբերգության մեղքը գցել Հայաստանի նախորդ իշխանությունների վրա:

Ալեքսանդր Գրիգորեւիչի հայտարարության եւ վարքագծի մեջ շատ տարօրինակ բաներ կան: Փաշինյանական արտահաստիքային պրոպագանդիստի ամպլուան, որով լիքն է Հայաստանի պրոիշխանական մեդիատարածքը, դժվարությամբ է կապվում իր՝ երկրի նախագահի ստատուսի հետ:

Ուրեմն ինչո՞ւ է Լուկաշենկոն որոշել իջնել մի մակարդակի, որը համատեղելի չէ իր՝ այդքան բարձր դիրքի հետ:

Համարձակվում եմ ենթադրել, որ պատասխանը բավականին պարզ է: Փաստերի եւ իրականության անտեսումն ու ոտնատակ տալը, Փաշինյանի փոքր, բայց գրգռված էգոն սպասարկելու փորձը կապված են անառակ որդուն ատլանտյան անհուն տարածքներից դեպի հայրենի եվրասիական տուն վերադարձնելու մղման հետ:

Այն, որ Նիկոլ Փաշինյանը շատ տարվեց աշխարհաքաղաքական լուցկիներով, վտանգավոր իրականություն է: Բայց որքանո՞վ են արդարացված Սերժի հաշվին Փաշինյանին եվրասիական տիրույթ վերադարձնելու պարոն Լուկաշենկոյի գործադրած ջանքերի ձեւն ու բովանդակությունը:

Սա բոլոր տեսանկյուններից կասկածելի այս խաղը խաղալու՝ եվրասիական շրջանակների ամենեւին էլ առաջին փորձը չէ: Նման սխեմաներ վերջին տարիներին ապարդյուն կերպով էլի են փորձել խաղարկել: Որքան կարելի է կրկնել նույն սխալը ու խաղեր տալ Փաշինյանի հետ մի եղանակով, որն առաջին հերթին ռեպուտացիոն կորուստներ է բերում իր՝ Բելառուսի նախագահի համար:

Նախ եւ առաջ Батька-ին չի սազում վատ արտահայտվել իր՝ թեկուզեւ նախկին գործընկերոջ հասցեին՝ նրա բացակայությամբ:

Երկրորդ՝ Ալեքսանդր Գրիգորեւիչի կողմից հիշատակված Սերժ Ազատովիչի հետ 5 միլիարդի մասին ունեցած սկանդալային խոսակցության ժամանակ ՀՀ երրորդ նախագահն այնպիսի փաստարկներ բերեց Ղարաբաղյան հարցում «առքուվաճառքի» անթույլատրելիության վերաբերյալ, որ անգամ Սերժ Սարգսյանի բելառուս գործընկերոջ պերճախոսությունը չօգնեց իրեն:

Երրորդ՝ հիշում եմ, որ իր մամլո ասուլիսներից մեկի ժամանակ պարոն Լուկաշենկոն Փաշինյանին ուղիղ մեղադրեց այն բանում, որ «վերջինս լեզուն մտցրել է մի տեղ»: Ու հիմա Հայաստանի վարչապետի լեզուն ֆիզիոլոգիական համապատասխան դիրքի վերադարձնելու հարցում օգնության նրա փորձը ստեղծում է անհետեւողականության եւ կոնյունկտուրայի շրջանակներում գործելու տպավորություն:

Հիշում եմ, թե ինչպես իմ՝ Բելառուս այցի ընթացքում ես չկարողացա Խատինի հուշահամալիրի մոտ զսպել արցունքներս. ինչպե՜ս էի հպարտանում Մարշալ Բաղրամյանի բաճկոնով, որը տեսել էի Հայրենական Մեծ պատերազմի՝ Մինսկի թանգարանում, անձնական ինչպիսի՜ ջանքեր եմ գործադրել, որ Բելառուսին ընդգրկեին Բոլոնյան գործընթացի մեջ 2015թ. Երեւանում տեղի ունեցած նախարարական գագաթնաժողովի ժամանակ:

Ես չափազանց շատ եմ սիրում Բելառուսը, որ անգամ տեսականորեն նախագահ Լուկաշենկոյին առաջարկեմ հայրենիքի վաճառքի նմանօրինակ սխեմա, օրինակ՝ Արեւմտյան Բելառուսը Լեհաստանին վաճառելու տեսքով: Կասկած չկա, որ լեհերը Գոմելի համար շատ լավ գին կվճարեին:

Բայց դուք, ինչպես եւ մենք հայրենիքն առուծախի առարկա չենք դարձրել ու չենք դարձնում, շատ հարգելի պարոն նախագահ»:

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ Է

«ՆԻԿՈԼԻՑ ՀԵՏՈ ԿՅԱՆՔ ԿԱ»

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի գործով դատական նիստից առաջ լրագրողների հետ զրույցում ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանն անդրադարձավ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի արձագանքին՝ կապված Աշոտյանի գործի հետ: Հայկ Մամիջանյանն ասաց, որ ավելի վաղ էլ Եվրոպայից ամենաբարձր մակարդակով արձագանքներ են եղել Արմեն Աշոտյանի գործի վերաբերյալ:

«Ոչ միայն ԵԺԿ հայտարարությունն է եղել, որտեղ հստակ ֆիքսվում է, որ Արմեն Աշոտյանը քաղբանտարկյալ է եւ պահանջ է ներկայացվում ազատ արձակել Արմեն Աշոտյանին եւ դադարեցնել անհիմն քրեական հետապնդումը, այլ նաեւ Կենտրոնամետ դեմոկրատների միությունից է եղել հայտարարություն, որտեղ նույնպես շատ հստակ ու շատ չոր ձեւակերպումներով ֆիքսում են, որ պարոն Աշոտյանի նկատմամբ քաղաքական հալածանք է, եւ նա քաղբանտարկյալ է: Այն հայտարարությունը, որը ստացվել է՝ ի պատասխան պատգամավոր Թագուհի Թովմասյանի նամակի, անհրաժեշտ է կարդալ տողատակերում: Եթե այս պարագայում այս կառույցի ներկայացուցիչները չտեսնեին որեւէ խնդիր այս գործընթացում, ապա պատասխանը նմանօրինակ չէր լինի»,- ասաց Մամիջանյանը: Նրա խոսքով՝ եվրոպական կառույցների հետ աշխատած ցանկացած մարդ կարող է ֆիքսել, որ թե այս հայտարարությունը, թե նախորդ հայտարարությունները բնորոշում են եվրոպական միջազգային կազմակերպությունների վերաբերմունքն այս գործընթացին: «Աշխարհի տարբեր կետերում շատ տարբեր քաղաքական դրդապատճառներով քրեական գործեր են եղել, բայց այս մեկն արդեն աբսուրդի ժանրից անդին է: Ինչպես իմ գործընկերներից մեկը մի անգամ ասաց՝ նույնիսկ ամենատարբեր քաղաքական բանտարկյալների քրեական գործերն այսպիսի խայտառակ կերպով չեն կարված ու ձեւված, ինչպես Արմեն Աշոտյանի գործը: Այնպես որ, ակնկալել, մտածել՝ պատասխան լինելու է Եվրոպայից, թե չէ, կարծում եմ՝ վաղուց ժամանակավրեպ է: Եվրոպան հստակ ֆիքսել է, որ Արմեն Աշոտյանը քաղբանտարկյալ է, ՀՀ քաղաքացիների զգալի մի հատվածը, ըստ սոցիոլոգիական հարցումների, ֆիքսում են, որ Հայաստանում կան քաղբանտարկյալներ, եւ նրանցից ամենաշատը նշվում է Արմեն Աշոտյանի անունը»,- ասաց նա:

Հայկ Մամիջանյանը հավելեց, որ մենք մի երկրում ենք ապրում, որտեղ Վանաձորի նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանին ուղղակի ՔՊ-ին հաղթելու համար են պահում անազատության մեջ, Արմինե Ադիբեկյանի եւ Ավետիք Իշխանյանի նկատմամբ ֆեյսբուքյան գրառումների համար գործեր են հարուցվում: «Իսկ այդ ամենի հետ կապված միակ բանը, որ կարող եմ ասել՝ դեմոկրատիայի բաստիոն ենք զանգել, ասում էին՝ այսպես երկար շարունակել չես կարող. եթե քո երկրի բնակչության մեկ քառորդն ասում է, որ դու դավաճան ես, վաղ թե ուշ գնալու ես»,- նշեց նա:

Հարցին, թե ինչ ակնկալիք ունի այսօրվա դատական նիստից, Մամիջանյանը պատասխանեց. «Մի բան կարող եմ ասել բոլոր այն դատավորներին, որոնք համաձայնում են դակել այս որոշումները՝ Նիկոլից հետո կյանք կա: Միակ բանը, որ կուզեմ ասել թե՛ դատավորներին, թե՛ դատախազներին, որոնք այս կամ այն հանձնարարականն են կատարում, միշտ ֆիքսեք՝ Նիկոլից հետո կյանք կա»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԹԵԼԵԳՐԱՄՅԱՆ ԹՄՐԱԲԻԶՆԵՍ

Բացահայտվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ եւ մաքսանենգությամբ զբաղվող հանցավոր խումբ. այս մասին տեղեկացնում են ՀՀ ֆինչական կոմիտեից:

«ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված քննչական մեծածավալ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ Երեւան քաղաքի 30-ամյա բնակիչ Ա.Կ.-ն թմրամիջոցների մաքսանենգությամբ եւ ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019-2022 թթ. ընթացքում համաքաղաքացիների՝ 31-ամյա Ռ.Բ.-ի, 26-ամյա Ա.Ս.-ի, 23-ամյա Վ.Չ.-ի, 32-ամյա Վ.Գ.-ի եւ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, իր եւ հանցակիցների կողմից ստեղծված եւ կառավարված տելեգրամյան էջերի միջոցով տեւական ժամանակ զբաղվել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ, այդ նպատակով կազմակերպել եւ ղեկավարել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգությամբ ապօրինի տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային եւ ՀՀ պետական սահմաններով:

Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2019-2022թթ. ընթացքում Ա.Կ.-ն, Ռ.Բ.-ն եւ Ա.Ս.-ն իրենց կողմից «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծված եւ կառավարված «@ngers», «Ismoke», «SchockMaster» եւ նույնանուն այլ առցանց խանութ-հարթակներով զբաղվել են առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ՝ դրանում ներգրավելով նաեւ Վ.Չ.-ին, Վ.Գ.-ին, Ա.Գ.-ին եւ այլ հանցակիցների:

Վ.Չ.-ն եւ Վ.Գ.-ն՝ նախ որպես թմրամիջոց տեղադրող, ապա՝ նաեւ պահեստապետի պարտականություններ կատարող, ապահովել են, որ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներն առանձնացվեն ըստ քաշերի, փաթեթավորվեն եւ նախապես տեղադրվեն թաքստոցներում, որից հետո թմրամիջոցների գտնվելու վայրերը լուսանկարվել են, ծրագրային հավելվածի միջոցով նշվել են դրանց գտնվելու վայրերի կոորդինատները եւ ուղարկվել խանութ-հարթակները կառավարողներին:

Վերը նշված խանութ-հարթակների համար որպես պահեստ օգտագործված բնակարանում, Վ.Գ.-ի փաստացի բնակության վայրում, նրա ծնողներին պատկանող բնակարանում, ինչպես նաեւ Ռ.Բ.-ի բնակարանում հայտնաբերվել են տարբեր քաշերով՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ, նաեւ «Պրեգաբալին» տեսակի հոգեմետ նյութ:

Ա?Կ?-ն հեռահաղորդակցական համակարգերի կիրառմամբ կազմակերպել եւ ղեկավարել է նաեւ ԱՄՆ-ից ապօրինի թմրամիջոցների ձեռք բերման եւ բեռնափոխադրող կազմակերպության միջոցով, մաքսանենգությամբ դրանք ՀՀ տեղափոխումը, առաքանին ՀՀ-ում ստացվելուց հետո հանցակիցների միջոցով դրա ստացումը: ՀՀ ապօրինի տեղափոխված թմրամիջոցի հերթական խմբաքանակը՝ առանձնապես խոշոր չափերով «Մեթամֆետամին» եւ «Կոկաին» տեսակի թմրամիջոցները, հայտնաբերվել են բեռնափոխադրող ընկերության միջոցով ԱՄՆ-ից ՀՀ ներմուծված առաքանիների զննությամբ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Ա.Կ.-ին, Վ.Չ.-ին եւ Վ.Գ.-ին մեղադրանքներ են առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Ռ.Բ.-ին եւ Ա.Ս.-ին՝ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

5 անձանց նկատմամբ էլ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, որոնցից 3-ի մասով հետագայում այն փոխարինվել է այլ խափանման միջոցներով: Նշված անձանց մասով հայտարարվել է նախաքննության ավարտի մասին, եւ վարույթի նյութերն ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Հանցավոր խմբի այլ անդամների հայտնաբերելու, թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը, ինչպես նաեւ դրանց շրջանառությունից ստացված դրամական միջոցների ամբողջական ծավալները պարզելու մասով նախաքննությունը շարունակվում է»,- ասված է հաղորդագրությունում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊՊԾ

ՁԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՑԱՆ

Պետական պահպանության ծառայության պետը եւ ծառայության պետի տեղակալները իրավունք կունենան զորդադրելու ֆիզիկական ուժ, կրելու, պահելու եւ կիրառելու հատուկ միջոցներ, ինչպես նաեւ զենք. նման նախագիծ ներկայացրել է ՊՊԾ-ն:

«Ծառայության պետին եւ ծառայության պետի տեղակալներին կրելու, պահելու եւ կիրառելու իրավունքով հատկացվում են ծառայության տնօրինության տակ գտնվող հատուկ միջոցներ եւ զենք: Ծառայության պետին եւ ծառայության պետի տեղակալներին հատուկ միջոցներով եւ զենքով ապահովելու կարգը, հատուկ միջոցների, զենքի ու ռազմամթերքի ցանկը, հատուկ միջոցների եւ զենքի հետ անվտանգ վարվելու կանոնները, ինչպես նաեւ հատուկ միջոցների եւ զենքի կիրառման ուսուցման կազմակերպման կարգը սահմանում է ծառայության պետը»,- նշվում է նախագծում:

Առաջարկվում է նաեւ ծառայության ծառայողներին իրավունք վերապահել վերջիններիս կողմից պահպանական միջոցառումների իրականացման ժամանակ օգտագործել նաեւ ֆիզիկական անձանց եւ կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները:

«Առաջարկվում է ծառայությունում ներդնել ծառայության անցնող քաղաքացիների կողմից երդում տալու վերաբերյալ դրույթ, ինչը կբարձրացնի վերջիններիս պատասխանատվությունը զինվորական պարտքի եւ պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցությունը»,- նշվում է հիմնավորման մեջ:

Նախագծվում նշվում է նաեւ, որ ծառայության ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը կիրականացվի ազգային անվտանգության մարմիններում ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կապահովվեն որակյալ բժշկական օգնությամբ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գերատեսչական ռազմաբժշկական հաստատությունում: Հիշեցնենք՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ին Ազգային ժողովն ընդունեց որոշում, որով ԱԱԾ պետական պահպանության ծառայությունը դարձավ վարչապետին ենթակա մարմին:

«ԱԱԾ-ին հնարավորություն ենք տալիս, որպեսզի վերջինս կենտրոնանա հիմնական երեք ուղղությամբ աշխատանքների վրա՝ հակահետախուզություն, ահաբեկչության դեմ պայքար եւ սահմանադրական կարգի պահպանություն»,- հայտարարել էր ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

Մարտի 29-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը ստորագրել էր Պետական պահպանության ծառայության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին որոշումը:

Ըստ որոշման՝ ծառայության կառավարումն իրականացնում է վարչապետը: Վարչապետը հաստատում է ծառայության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, եւ կատարում է կանոնադրության փոփոխություններ, ինչպես նաեւ ծառայողների եւ աշխատողների քանակը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ծառայության պետը հաշվետու է վարչապետին:

ՀԱՂԹԵԼ Է ԱՆԵՐԸ

ՁԵՎԱԿԱՆ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔ

Ս.Պ.-ն, 2005 թվականից մինչ օրս զբաղեցնելով Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեպատ բնակավայրի ղեկավարի պաշտոնը, 2012 թվականին, շուկայականից էականորեն ցածր գնով, համայնքի հաշվեկշռում գտնվող կենցաղի տան շենքը վաճառել է իր աներոջը, որն էլ տարիներ անց ձեւական առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով գույքը վաճառել է իր դստերը՝Ս.Պ.-ի կնոջը: Քրեական վարույթով պարզվել է, որ Այգեպատ բնակավայրի ղեկավար Ս.Պ.-ն, (լիազորությունները դադարեցված են) համայնքապետարանի առաջատար մասնագետ Ռ.Մ.-ի հետ համատեղ, համայնքի ավագանու նիստի՝ 2012 թվականի հուլիսի 14-ի արձանագրության մեջ կեղծ տեղեկություններ է ներառել այն մասին, որ ավագանու երկու անդամները կողմ են համայնքի կենցաղի տան կիսաքանդ շենքն օտարելուն (իրականում կենցաղի տունը 2008-2010 թվականների ընթացքում վերանորոգվել է):

Կեղծ արձանագրության հիման վրա՝ կենցաղի տան շենքն օրենքի խախտմամբ դրվել է աճուրդի. 7 մլն 210 հազար դրամ շուկայական արժեք ունեցող շենքի օտարման մեկնարկային գին է սահմանվել 2 մլն 570 հազար դրամը:

Կազմակերպված աճուրդ-վաճառքին մասնակցել եւ հաղթող է ճանաչվել Ս.Պ.-ի աները՝ Ռ.Խ.-ն: Աճուրդից առաջ տվյալ տարածքը 15 տարով վարձակալության է տրամադրված եղել ամսական 10 հազար դրամով: Վարձակալության գումարը վաճառքից հետո վճարվել է համայնքի ղեկավարին:

Ռ.Խ.-ն վերոնշյալ գույքը 2018 թվականի մարտի 13-ին ձեւական առուվաճառքի պայմանագրով 3 մլն դրամով օտարել է իր դստերը՝Այգեպատ բնակավայրի ղեկավար Ս.Պ.-ի կնոջը:

Դատախազը 2023 թվականի դեկտեմբերի 18-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Այգեպատ բնակավայրի ղեկավար Ս.Պ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելը), 445-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիք կատարելը), 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով (հրապարակային սակարկությունների կարգը չարամտորեն խախտելը), 190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (պաշտոնեական դիրքն օգտագործելով՝փողերի լվացումը):

Պաշտոնեական կեղծիք կատարելուն եւ վստահված գույքի հափշտակությանն օժանդակելու համար հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաեւ ավագանու նախկին անդամների նկատմամբ, իսկ վստահված գույքի հափշտակության, հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելուն եւ փողերի լվացմանն օժանդակելու համար՝ համայնքի ղեկավարի աներոջ՝Ռ.Խ.-ի նկատմամբ:

Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ՝հանցավոր ծագում ունեցող գույքի՝ Այգեպատ համայնքի կենցաղի տան վրա արգելանք է կիրառվել:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 62 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2023 թ. «Ներուժ 4.0» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագրի շրջանակներում հայտարարում է դրամաշնորհային մրցույթներ «Գաղափարի փուլ» եւ «Աճի փուլ» բաղադրիչների համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ԲՏԱ նախարարությունից հայտնում են, որ «Գաղափարի փուլ» բաղադրիչով դրամաշնորհային մրցույթի ընդհանուր բյուջեն կազմում է 30 միլիոն ՀՀ դրամ:

«Աճի փուլ» բաղադրիչով դրամաշնորհային մրցույթի ընդհանուր բյուջեն կազմում է 60 միլիոն ՀՀ դրամ:

Ծրագրով նախատեսվում է դրամաշնորհների տեսքով ֆինանսավորում տրամադրել գաղափարի կամ աճի փուլում գտնվող ընկերություններին, որոնք մասնակցել են 2023 թ. «Ներուժ 4.0» աքսելերացիոն ծրագրին, եւ իրենց կողմից ներկայացվող արտադրանքի եւ/կամ ծառայության նախատիպը միտված է բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արժեքի ստեղծմանը, տեխնոլոգիաների կիրառմամբ արդի խնդիրների ու մարտահրավերների լուծմանը:

«Գաղափարի փուլ»

Այս բաղադրիչի շրջանակում ընդհանուր բյուջեն կազմում է 30 միլիոն ՀՀ դրամ, որը նախատեսվում է բաշխել մրցույթը հաղթահարած 3 ընկերությունների միջեւ՝ յուրաքանչյուրին տրամադրելով մինչեւ 15 մլն ՀՀ դրամ ֆինանսավորում:

ՓԱԿ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում կան փակ եւ դժվարանցանելի ավտոճանապարհներ: Այս մասին հայտնում են Փրկարար ծառայությունից: Փակ է Արագածոտնի մարզում «Ամբերդ» բարձրլեռնային օդերեւութաբանական կայանից Քարի լիճ տանող ավտոճանապարհը:

Վարդենյաց լեռնանցքը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար, իսկ կցորդիչով բեռնատարների համար՝ միայն անվաշղթաների կիրառման դեպքում:

Վայոց ձորի մարզի Վայք-Սարավան-«Զանգեր» կոչվող հատվածը, Ջերմուկ քաղաք տանող ավտոճանապարհը, Վարդենյաց լեռնանցքում, Գեղարքունիքի մարզի ավտոճանապարհներին, Տիգրանաշենի ոլորաններում, Սյունիքի մարզի Տաթեւ-Լծեն, Գորիս-Սիսիան, Սիսիան-«Զանգեր» կոչվող հատվածում եւ Արագածոտնի մարզի Ապարան, Արագած, Թալին տարածաշրջանների ավտոճանապարհներին առկա է մերկասառույց:

Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից եւ ՌԴ ԱԻՆ Հյուսիսային Օսիայի ճգնաժամային կառավարման կենտրոնից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

Վարորդներին խորհուրդ է տրվում երթեւեկել բացառապես ձմեռային անվադողերով:

ԿԳՄՍՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ՝ 10 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՉԱՓՈՎ

Կրկնապատկվել է սպորտային մեծ նվաճումներ ունեցող մարզիկներին եւ նրանց մարզիչներին պետության կողմից տրվող տարեվերջյան միանվագ գումարը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կառավարության որոշմամբ՝ ավելացել են պարալիմպիկ, սուրդոլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված, ինչպես նաեւ ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտի, շաշկի, ուշու եւ շախմատ մարզաձեւերի միջազգային առաջնություններում, աշխարհի եւ Եվրոպայի երիտասարդների առաջնություններում, Եվրոպայի երիտասարդական Օլիմպիական փառատոնում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկներին, հավաքական թիմերի գլխավոր մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին եւ ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին շնորհվող դրամական մրցանակները:

Որոշումը տարածվում է նաեւ հաշմանդամություն ունեցող մարզիկների վրա:

Նոր որոշմամբ՝ տարեվերջյան միանվագ պարգեւատրման են ներկայացվում նաեւ Ռազմական սպորտի միջազգային խորհրդի՝ զինվորականների համաշխարհային խաղերում, զինվորականների աշխարհի առաջնություններում, զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց համաշխարհային խաղերում եւ զինվորական ծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց աշխարհի առաջնություններում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկները, նրանց մարզիչները եւ բժիշկները: Ըստ նոր փոփոխության՝ Ռազմական սպորտի միջազգային խորհրդի առաջնություններում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկները կստանան համապատասխանաբար 10 մլն, 7 մլն եւ 4 մլն դրամ մրցանակ: Ազգային հավաքական թիմերի գլխավոր մարզիչները եւ մեդալակիր մարզիկների անձնական մարզիչները կստանան համապատասխանաբար 5 մլն, 3,5 մլն եւ 2 մլն դրամ՝ նախկին 2,5 մլն, 1,75 մլն եւ 1 մլն դրամի փոխարեն:

Ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչները կստանան համապատասխանաբար 2 մլն, 1,4 մլն եւ 800 հազար դրամ:

Աշխարհի երիտասարդական առաջնությունում եւ համաշխարհային ունիվերսիադայում (համաշխարհային ունիվերսիադան նաեւ ՕԽ ծրագրում չընդգրկված մարզաձեւերում) մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկները կստանան 3 մլն (1-ին տեղ), 1,6 մլն եւ 1,2 մլն դրամ՝ երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրած մարզիկների համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կրկնապատկվել են նաեւ ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչների, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչների, հավաքական թիմերի երկրորդ մարզիչների եւ մեծահասակների ՀՀ հավաքական թիմերի բժիշկների միանվագ պարգեւատրումները: Նոր փոփոխությամբ՝ Պարալիմպիկ խաղերում ոսկե մեդալ նվաճած մարզիկները կստանան միանվագ 10 մլն դրամ մրցանակ, արծաթե մեդալակիրները՝ 7 մլն, իսկ երրորդ տեղը զբաղեցրած մարզիկները՝ 4 մլն դրամ պարգեւատրում: Այս պարագայում եւս կրկնապատկվել են նաեւ ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչների, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչների, հավաքական թիմերի երկրորդ մարզիչների եւ մեծահասալների ՀՀ հավաքական թիմերի բժիշկների միանվագ պարգեւատրումները:

2022 թ. Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) ՀՀ ներկայացնող մարզիկները նվաճել են 307 մեդալ, այդ թվում՝ 104 ոսկե, 70 արծաթե եւ 133 բրոնզե մեդալներ: Ընդհանուր հաշվարկով՝ 2023 թ. ՀՀ մարզիկները դեկտեմբերի 18-ի դրությամբ նվաճել են 445 մեդալ: Առաջարկվում է նաեւ տարեվերջյան միանվագ պարգեւատրման գումարները շնորհել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով:

Գործադիրն ընդունել է նաեւ մեկ այլ որոշում՝ ՀՀ հավաքական թիմերի կազմում բարձր արդյունքներ գրանցող մարզիկներին ու մարզիչներին հասանելիք թոշակը տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Ըստ հիմնավորման՝ պետբյուջեով «Օլիմպիական խաղերում, աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին եւ նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում» միջոցառմանը նախատեսված է 624 346.2 հազար դրամ: Հաշվի առնելով 2022 թ. Հայաստանի հավաքականի մարզիկների ցուցաբերած արդյունքները՝ ավելի քան 280 շահառու, ինչպես նաեւ ձեռք բերած վարկանիշները՝ անհրաժեշտություն է առաջացել այդ գումարն ավելացնելու. ըստ այդմ՝ միջոցառման համար պահանջվող գումարը կկազմի 736 772.3 հազար դրամ:

ՄԻՊ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԸ՝ ԽՆԴԻՐ

Երեւանում եւ ՀՀ մարզերում թափառող շների՝ մարդկանց, այդ թվում երեխաների վրա պարբերաբար հարձակումների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, թեժ գծին ստացված ահազանգերի, ինչպես նաեւ հրապարակային տեղեկությունների հիման վրա՝ Պաշտպանի հանձնարարությամբ անմիջապես նախաձեռնվել է ուսումնասիրության ընթացակարգ:

Ստացված տեղեկությունների համաձայն՝ թափառող շները մարդկանց լուրջ վնասվածքներ են պատճառել, ավելին՝ դպրոցի ճանապարհին առկա աղբակույտի շուրջը թափառող 5 շների հարձակման հետեւանքով արձանագրվել է երեխայի մահվան դեպք:

Հաշվի առնելով մարդու իրավունքների խախտումների վտանգավորության աստիճանն ու խնդրի հրատապությունը՝ Պաշտպանը, ինչպես յուրաքանչյուր դեպքով, այնպես էլ համակարգային հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու պահանջով գրություններ է հասցեագրել իրավասու մարմիններին: Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ մարդկանց վրա թափառող շների հարձակման դեպքերը կանխելու ուղղությամբ պետությունը պետք է մշակի ավելի արդյունավետ եւ գործուն մեխանիզմներ, որոնք առավելագույնս կնպաստեն խնդրի լուծմանը եւ կապահովեն մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նշված միջոցառումները պետք է կրեն համալիր բնույթ: Այս տեսանկյունից կարեւոր է նաեւ համայնքներում աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքների ապահովումը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 23 պատահար. 2 մարդ զոհվել է, 29-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԵՎՈՐ

«ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ»

«ՎՏԲ-Հայաստան» բանկը մասնաճյուղերում բացել է հաճախորդների սպասարկման «Պրիվիլեգիա» գոտիներ:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը «Պրիվիլեգիա» սեգմենտի հաճախորդների անհատական սպասարկման համար գոտիներ է բացել հինգ մասնաճյուղերում՝ երկուսը՝ Երեւանում, Էջմիածնում, Արմավիրում եւ Գյումրիում: 2024թ.-ին բանկը նախատեսում է կրկնապատկել պրեմիում ծառայությունների փաթեթի օգտատերերի համար հատկացված տարածքով նման գրասենյակների թիվը:

«Պրիվիլեգիա» փաթեթը հնարավորություն է տալիս օգտվել բանկի պրեմիում ծառայություններից: Հաճախորդները ստանում են անհատական սպասարկում, ավելի շահավետ ֆինանսական պայմաններ եւ սպասարկման բարձր մակարդակ: Բանկի գրասենյակներում նման հաճախորդներն ունեն անհատական հանդիպումների համար նախատեսված սենյակ՝բանկային գործարքներ իրականացնելու հնարավորությամբ:

Առանձնացված գոտիներում «Պրիվիլեգիա» փաթեթից օգտվողները կարող են ստանալ անձնական մենեջերի խորհրդատվություն ցանկացած ֆինանսական հարցերի վերաբերյալ, բացել եւ համալրել ավանդ, հաշիվ կամ քարտ, կանխիկացնել միջոցներ, կատարել կոմիսիոն գործարքներ եւ փոխանցումներ: Ծառայության շրջանակներում անվճար սպասարկումը հասանելի է նաեւ հաճախորդի ընտանիքի անդամներից մեկին:

«Նոր գոտիները կբարելավեն հաճախորդների սպասարկման որակը, եւ վերջիններիս ստեղծման անհրաժեշտությունը առաջին հերթին թելադրված է հենց հաճախորդների՝ անհատական սպասարկում ստանալու ցանկությամբ: Բանկի մասնաճյուղերում գոտիավորման հայեցակարգը մշակված է այնպես, որ նրանց ապահովի առավելագույն հարմարավետություն եւ գաղտնիություն: Մինչեւ տարվա վերջ մեր մասնաճյուղային ցանցի 10%-ը կկարողանա սպասարկել հաճախորդներին նոր «Պրիվիլեգիա» գոտիներում: 2024թ.-ին նախատեսում ենք կրկնապատկել նման գոտիների թիվը»,- մեկնաբանել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

«Պրիվիլեգիա» փաթեթի օգտատեր դառնալու համար պետք է առնվազն 6 ամիս ժամկետով բանկային ավանդ ներդնել՝սկսած 4 մլն ՀՀ դրամ գումարից (կամ համարժեք արտարժույթ), կամ վճարել ամսական սպասարկման վճար:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՈՒՆՈՎ

Շառլ Ազնավուրի հարյուրամյակի առթիվ Փարիզի քաղաքապետարանը, հարգանքի տուրք մատուցելով ֆրանսահայ արվեստագետին եւ հումանիստին, Ելիսեյան այգիների մի ընդգրկուն հատված կանվանվի Շառլ Ազնավուրի անունով:

«Ժողովուրդ» օրաթերթն այս մասին տեղեկանում է «Ազնավուր» հիմնադրամի տարածած հաղորդագրությունից:

Փարիզի կենտրոնում գտնվող այս տարածքը ժամանակավորապես փակ կլինի վերանորոգման ու բարեկարգման աշխատանքների նպատակով եւ կվերաբացվի հանրության առջեւ 2024 թվականի գարնանը:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ

Հայազգի գործարար, ներդրող, «Բալչուգ Կապիտալ»-ի հիմնադիր եւ գործադիր տնօրեն Դավիթ Ամարյանն իր եղբոր՝ գործարար, հայկական «Էփրիֆոթ Կապիտալ» ընկերության հիմնադիր Վարդան Ամարյանի հետ Հայաստանում ստեղծել են «Ամարյան» բարեգործական հիմնադրամը:

Դավիթ եւ Վարդան Ամարյանները երկար տարիներ գործունեություն են ծավալում միջազգային բիզնես-ասպարեզում եւ հայրենիքի համար այս դժվարին փուլում իրենց հայրենակիցներին, Արցախից բռնի տեղահանվածներին հասցեական աջակցություն ցուցաբերելու նպատակով մեկնարկել են այս նախաձեռնությունը:

Հիմնադրամի հիմնական ուղղություններն են կրթական ծրագրերի, առողջ ապրելակերպի եւ սպորտի զարգացման խթանումը, մշակույթը, տարբեր ռազմավարական նախագծերի միջոցով երիտասարդներին օժանդակությունը:

«Ամարյան» բարեգործական հիմնադրամի գործունեության մեկնարկը տրվել է Սյունիքի մարզից, մասնավորապես՝ Վերիշենից՝ Ամարյանների հայրական գյուղից:

«Ինձ համար մեծ ողբերգություն է, որ մենք այսօր համահայկական այս աղետի ու աննախադեպ հումանիտար ճգնաժամի ականատեսն ենք: Դրա արդյունքում առաջացած խնդիրներն ավելի բազմոլորտ են եւ ճյուղավորված, ուստի անհրաժեշտություն է կարիքի պարբերական գնահատման վրա հիմնված հստակ ռազմավարությամբ, ինստիտուցիոնալ ու համակարգված, պետական, միջազգային ու հասարակական կառույցների հետ համագործակցությամբ, երկարաժամկետ եւ թիրախային ծրագրեր իրականացնելը. այդ ծրագրերը պետք է լինեն շարունակական: Հիմնադրամի շնորհիվ Հայաստանում մենք կօգնենք ընդլայնել որակյալ կրթության հնարավորությունները՝ կարեւորելով կրթության անգնահատելի դերը մեր երկրի ապագայի համար,- նշել է «Ամարյան» բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Դավիթ Ամարյանը եւ հավելել, - չնայած նրան, որ տարբեր երկրներում ենք գործել եւ բիզնես հաջողությունների հասել, այդուհանդերձ, մեր գործունեության առանցքը, մեր արմատներն ու պատմությունը Հայաստանում են: Մեր գործունեությունը, բազմաթիվ նախագծեր մշտապես ուղղված են եղել մեր երկրի հզորացմանը եւ տնտեսության զարգացմանը: Այսօր առավել, քան երբեւէ, օրհասական է աշխարհի հայերի համախմբվածությունն ու միասնականությունը»:

«Էփրիքոթ Կապիտալի» հիմնադիր եւ «Ամարյան» բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Վարդան Ամարյանը հավելել է. «Արցախում տեղի ունեցածը մեծ փորձություն է ինչպես Հայաստանի, այնպես էլ բոլոր հայերի համար: Մենք մեր առջեւ հստակ առաջադրանք ունենք. յուրաքանչյուր հայ պետք է արժանապատիվ ապրելու եւ արարելու հնարավորություն ունենա: Մեր հիմնադրամի նախաձեռնությունները հետեւողականորեն ստեղծելու են նախադրյալներ այդ հնարավորությունը իրագործելու համար: Գաղափարները շատ են, եւ մենք դրանք իրագործելիս հիմք ենք ընդունելու մեր շահառուների կարճաժամկետ եւ երկարաժամկետ կարիքները»:

Սյունիքի մարզի Վերիշեն գյուղում ապաստանել են Արցախից բռնի տեղահանված 89 հայրենակից, որոնք գյուղի սոցիալապես անապահով ընտանիքների (մոտ 157 հոգի) հետ միասին դարձել են «Ամարյան» հիմնադրամի առաջին շահառուները:

Հիմնադրամն ընտանիքներին ապահովել է տաք հագուստով՝ բաճկոններով, կոշիկներով: Արցախից տեղահանված երեխաներն ապահովվել են նաեւ դպրոցական փաթեթներով՝ գրենական պիտույքներ, պայուսակներ եւ այլն:

Ամարյան եղբայրները Վերիշենի 345 աշակերտ ունեցող դպրոցին, որը 2022-ին ճանաչվել է Սյունիքի լավագույն դպրոց, նույնպես աջակցություն են տրամադրել՝ մարզադահլիճի վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, ինչպես նաեւ սպորտային գույք՝բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի ցանցեր ու գնդակներ (յուրաքանչյուրից 30-ական), թենիսի ռակետներ եւ գնդակներ (10 հավաքածու) եւ այլ պարագաներ:

«Ամարյան» բարեգործական հիմնադրամի՝ 2023-2024թթ.-ին Սյունիքում իրականացվող նախագծերի ընդհանուր նախնական բյուջեն կկազմի շուրջ 122 մլն դրամ, իսկ հիմնադրամի ծրագրերը լինելու են շարունակական եւ ընդգրկելու են նաեւ Հայաստանի այլ մարզեր ու բնակավայրեր:

ՍՏՈՒԳԱՅՑ

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Առողջապահության նախարարություն գերատեսչության 2023թ. գործունեության հաշվետվությունը ներկայացնելու նպատակով:

Ձեկույցներով հանդես են եկել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը եւ նախարարի տեղակալները:

Նախ՝ ներկայացվել են առողջապահության ոլորտում իրականացված աշխատանքները: Ընթացիկ տարում շարունակվել է առողջապահության ոլորտի համակարգային նշանակության ծրագրերի իրականացումը: Մշակվել է առանցքային բարեփոխումներից մեկի՝ առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման օրենքի նախագիծը: Ձեւավորվել են փորձագիտական խմբեր, իրականացվել է գների հետազոտություն, որի հիման վրա կազմվել է հիմնական ծառայությունների փաթեթը եւ ծախսերի հաշվարկը: Բարեփոխման վերջնանպատակն է հիմնական բժշկական ծառայություններից օգտվելու հասանելիության բարելավումը, ֆինանսական պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, մահացության եւ հիվանդացության բեռի նվազեցումը: Նախագիծը լրամշակումից հետո ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Վարչապետ Փաշինյանը հետաքրքրվել է, թե պետպատվերի համակարգում ինչ փոփոխություններ են կատարվել: «Նախկինում այդ պրակտիկան ունեինք, որ նախարարությունը բաշխում էր գումարներ, ըստ էության, հայեցողական որոշմամբ: Հիմա այդ պրակտիկան ընդհանրապես դո՞ւրս է եկել, այսինքն՝ օֆերտայի տրամաբանությամ՞բ են գումարները բաշխվում եւ բուժառուի հետեւի՞ց են գնում: Հիմա դա ամբողջությամբ այդպե՞ս է»,- հարցրել է Նիկոլ Փաշինյանը:

Ի պատասխան՝ Անահիտ Ավանեսյանը դրական պատասխան է տվել եւ հավելել, որ այժմ գումարները գնում են բուժառուի հետեւից:

Արձագանքելով՝ վարչապետը նշել է. «Մենք ասում ենք՝ա. նախարարի հրաման սահմանաչափերի վերաբերյալ պետք է չլինի եւ բ. պետք է լինեն առողջապահական բժշկական կենտրոններ, որոնք չունեն պետպատվեր: Այսինքն՝ պետպատվերը բժշկական կենտրոնին կապելու պրակտիկան վերանում է: Ով ուզում է մատուցել, թող մատուցի: Սրա հետ կապված ես նախարարին հանձնարարել եմ հետեւյալը, որ հերթագրման ցուցակների մոբիլություն ապահովենք: Մարդը շահառու է, արձանագրվել է նրա շահառու լինելը, տեսնում է, որ իքս բժշկական կենտրոնում իր ծառայությունը կարող են մատուցել, ենթադրենք, 15 օրվա ընթացքում, ու ինքը համաձայնվում է: Հաջորդ փուլում տեսնում է, որ կա առողջապահական հիմնարկ, որ կարող է այդ նույն ծառայությունը մատուցել մեկ շաբաթվա ընթացքում: Մարդը պետք է ազատություն ունենա տեղափոխվել այդ ցուցակից այնտեղ եւ ավտոմատ այն մյուս ցուցակից պետք է դուրս գա: Այսինքն՝ մենք մարդուն ենք հետեւում, ոչ թե առողջապահական հիմնարկին, որպեսզի այդ մոբիլությունն առավել արդյունավետ լինի: Կարծում եմ՝ սա ծառայությունների մատուցման որակը բարելավելու եւս մի լրացուցիչ խթան կդառնա առողջապահական կենտրոնների համար»:

Առողջապահության ոլորտի մարդկային ռեսուրսների զարգացման նպատակով ներդրվել է բժիշկների լիցենզավորման համակարգ: Ստեղծվել է անկախ փորձագետներից կազմված էթիկայի հանձնաժողով՝ բժշկական կենտրոններում բուժաշխատողի կողմից էթիկայի կանոնների խախտումները քննելու համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ՀՈԼԻՎՈՒԴՅԱՆ ՓՈՐՁՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի՝ 80-ական թվականների շրջանավարտ, հոլիվուդյան բազմամյա փորձով հագուստի դիզայներ Մարո Փարյանն անձնական միջոցներով վերջին տարիներին Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում ստեղծագործական լաբորատորիա է հիմնել, որտեղ անց են կացվում հագուստի դիզայնի, գրիմի, ռեկվիզիտների պատրաստման դասընթացներ: Լաբորատորիան վերազինված է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Դասընթացները համակարգում է Լրացուցիչ եւ շարունակական կրթության կենտրոնը:

«Դասընթացներին մասնակցող ուսանողների մեծ մասը նկարիչներ են, որոնց հետաքրքրում է այս ամենը: Նրանք տիրապետում են գրիմի գաղտնիքներին, ձեռք են բերում նյութերի հետ աշխատելու գրագիտություն, մի շարք հմտություններ՝ ինչ կարելի է անել, ինչպես կարելի է անել... Հագուստի ձեւավորման դասերի մեկնարկի համար կարն է կարեւոր, ուսանողները սովորում են կարի մեթոդները, նաեւ կտրել են սովորում:

Հասկանալի է, որ սկզբնական շրջանում դժվար է. մեկի մոտ ստացվում է, մյուսի մոտ չի ստացվում: Բայց եթե ձգտում ունեն, անպայման կստացվի: Կարեւորը ձգտումն է»,-ասում է Մարո Փարյանը:

Փորձառու դիզայներն աշխատում է վեր հանել ուսանողի ունակությունները, բացահայտել նրանց շնորհները: Իսկ այդ ընթացքում ուսանողները ճշգրտում են իրենց ստեղծագործական դիրքորոշումը, որոշում անելիքները:

Նրանք երեք տարբեր նյութերի խառնուրդից ծնոտ, շրթունք եւ քիթ են պատրաստել, այժմ ընթանում է վրադիր գրիմի գործընթացը. ուսանողները կերպար են ստեղծում: Մարո Փարյանի սաներից է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի «Թատրոնի, կինոյի եւ հեռուստաոլորտի նկարչություն» մասնագիտական կրթական ծրագրով սովորող ուսանող Ջուլյանա Ղազարյանը:

«Եթե բեմանկարիչ ես, ապա պետք է նյութին ծանոթ լինես, գիտելիքներ ունենաս՝ ինչ նյութեր են օգտագործվում թատրոնի եւ կինոյի նկարչության մեջ: Այս ընթացքում ես շատ բան եմ բացահայտել»,- ասում է Ջուլյանան:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ ՋԱԶ

«Արամ Խաչատրյան» համերգասրահում դեկտեմբերի 23-ին տեղի կունենա «Ջազի սերունդ» խորագրով նախատոնական համերգ, որին ընդառաջ տեղի է ունեցել երաժշտական կազմի ներկայացուցիչների մամուլի ասուլիսը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Կատուներ» ավանգարդ-ջազ-ռոքային խմբի ղեկավար Վահագն Հայրապետյանը, անդրադառնալով երկրորդ անգամ իրականացվող «Ջազի սերունդ» նախագծին, նշեց, որ այն նաեւ ջազային երաժշտության սերնդափոխության մասին է:

«Գաղափարը շատ հետաքրքիր է, քանի որ, նախ, ջազային երաժշտությունը տարիներ շարունակ Հայաստանում ծաղկուն շրջան է ապրում, ինչպես նաեւ տարբեր սերունդներ ջազային երաժշտության տարբեր տեսակներ են առաջարկում»,- ասաց Հայրապետյանը՝ հավելելով, որ համերգին երեք սերունդ ներկայացնող դաշնակահարներ են մասնակցում: Բացի այդ, ըստ նրա՝ համերգի առանձնահատկություններից է նաեւ, որ նման ձեւաչափով ու կազմով առաջին անգամ են նվագելու:

Նրա խոսքով՝ Հայաստանն այժմ իր ջազային երաժիշտներով կարողանում է ներկայանալ ու իր խոսքն ասել աշխարհին:

«Այսօր երաժիշտներ ունենք, որոնց հրավիրում են՝ միջազգային բեմերում աստղերի հետ հանդես գալու: Մենք ինչ-որ տեղ նաեւ դեսպանի դեր ենք տանում, որովհետեւ անընդհատ ճամփորդում ենք՝ նվագելով տարբեր երկրներում: Երաժիշտներ կան, որոնք գնում են եւ ոչ միայն մասնակցում տարբեր մրցույթների, այլ նաեւ հաղթած հետ են գալիս»,-մանրամասնեց բանախոսը:

Թմբկահար Արման Մնացականյանը ուրախալի ու ոգեւորիչ փաստ համարեց, որ համերգն արդեն երկրորդ անգամ է կայանում՝ համոզմունք հայտնելով, որ բոլոր նախադրյալները կան, որպեսզի այն շարունակական բնույթ կրի՝ դառնալով ավանդույթ:

«Խորհրդանշական է, որ համերգի, այսպես ասած, ռիթմ սեկցիան տարբեր սերունդների ներկայացուցիչներ են: Տարիքային մեծ բարիեր կա, որն ընդհանրապես չի խանգարում, քանի որ երաժշտության եւ առավելապես՝ ջազային երաժշտության մեջ այդ տարիքային սահմանը երբեք չի նկատվում: Մենք, տարբեր սերունդների ներկայացուցիչներ լինելով, կյանքում նաեւ շատ մտերիմ ընկերներ ենք: Դրա համար այդ նույն դիալոգը բեմի վրա, անկախ տարիքային սահմանափակումներից, միշտ կայանում է»,-ընդգծեց նա՝ համոզմունք հայտնելով, որ այդ հանգամանքը համերգին եւս մեկ անգամ ներկա գտնվելու արժանիքներից է:

Բանախոսները «Ջազի սերունդ» խորագրով սպասվող համերգը եւ իրենց, եւ ունկնդրի համար լավ առիթ ու հնարավորություն են համարում խոսելու եւ շփվելու երաժշտության լեզվով:

«ՇՈՒՇԻՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՐԳԱՐԻՏ»

Դեկտեմբերի 11-12-ին Ֆրանսիայի Արեւելյան լեզուների եւ քաղաքակրթությունների ազգային ինստիտուտում (INALCO) տեղի ունեցավ «Շուշին՝ Կովկասի մարգարիտ» խորագրով երկօրյա գիտաժողովը, որը կազմակերպվել էր «Արեւելյան լեզուների եւ քաղաքակրթությունների ազգային ինստիտուտ» (INALCO) հիմնադրամի եւ «Հիշատակարան» նախագծի նախաձեռնությամբ:

Գիտաժողովի բացմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը:

Այնուհետեւ ողջույնի խոսքով հանդես եկավ Ֆրանսիայի Սենատի փոխնախագահ Պիեր Ուզուլիասը:

Գիտաժողովին ներկա էին Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Խաչատրյանը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան տիկին Հասմիկ Տոլմաջյանը, Ֆրանսիայի մշակութային ժառանգության ազգային ինստիտուտի տնօրեն Շարլ Պերսոնազը, հայ եւ օտարերկրացի գիտնականներ, քաղաքական, հասարակական եւ մշակութային գործիչներ:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին զեկույցներ՝նվիրված Շուշիի եւ, առհասարակ, Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին, եւ ուղենշվեցին այդ ուղղությամբ հայ ու ֆրանսիացի գործիչների համագործակցության ճանապարհները:

Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը բանախոսեց «Շուշին՝որպես կրթական եւ հոգեւոր կենտրոն՝ Արցախի թեմում, եւ Սուրբ Էջմիածնի առաքելությունը՝Արցախի մշակութային ժառանգության պահպանման գործում» թեմայով, ինչպես նաեւ ներկայացրեց Ադրբեջանի կողմից հայոց սրբավայրերի թիրախավորման եւ պատմամշակութային արժեքների ոչնչացման փաստագրված ապացույցներ ու միջազգային հանրության կողմից ձեռնարկվելիք քայլերի առաջարկներ:

ՄՆՈՒՓ ԴՈԳԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Խոսելով ամերիկացի ռեփեր Մնուփ Դոգի համերգի մասին, որը նախատեսված էր սեպտեմբերի 23-ին, սակայն այդպես էլ տեղի չունեցավ, իսկ 2.3 միլիարդ դրամն արդեն իսկ փոխանցվել է նրան, Ժաննա Անդրեասյանն ասաց, որ այն տեղի կունենա:

«Համերգը տեղի է ունենալու հաջորդ տարի, այժմ բանակցվում են ժամկետները, եւ այն կազմակերպությունը, որը պետք է կազմակերպեր միջոցառումը, բանակցությունների ավարտից հետո կհայտնի նոր ժամկետի մասին: Նախապես քննարկվում է, որ կարող է տեղի ունենալ մայիս-հունիս ամիսներին, բայց վերջնական ժամկետի մասին կհայտնեն բանակցությունների ավարտից հետո»,- կառավարության նիստից հետո լրագրողներին ասաց Ժ. Անդրեասյանը:

Հարցին՝ Մնուփ Դոգի համերգը համարո՞ւմ է մշակութային միջոցառում, ԿԳՄՍ նախարարը պատասխանեց, որ հարցին բազմիցս անդրադարձել է եւ կարծում է, որ ինչ-որ պահի այդ խոսակցությունները պետք է դադարեցվեն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉԵՆ ՄԵԿՆԵԼ ՖԻՆԼԱՆԴԻԱ

Հայաստանի ֆուտզալի հավաքականը չի մեկնել Ֆինլանդիա, որտեղ դեկտեմբերի 20-ին պետք է կայանար ֆուտզալի աշխարհի առաջնության էլիտ ռաունդի վերջին հանդիպումը:

ՀՖՖ-ն նման որոշում է կայացրել՝ հաշվի առնելով բրազիլացի խաղացողների շուրջ ստեղծված իրավիճակը:

«Ֆուտզալում տասնյակ տարիներ ի վեր բազմաթիվ ուժեղ հավաքականների կազմերում հանդես են գալիս բրազիլացի խաղացողներ: Ֆուտբոլում եւ ֆուտզալում գործում է օրենք, ըստ որի՝ այլազգի խաղացողները կարող են հանդես գալ տվյալ երկրի հավաքականում, եթե այդտեղ ապրել եւ խաղացել են վերջին 5 տարիների ընթացքում: Չնայած դրան՝ ֆուտզալում երկար ժամանակ ուշադրություն չի դարձվել վերոնշյալ օրենքի կիրառմանը, ու մարզաձեւի զարգացման նպատակով աչք է փակվել այն բրազիլացիների վրա, որոնք 5 տարի չեն խաղացել տվյալ երկրում, սակայն, քաղաքացիություն ստանալով, հանդես են եկել տարբեր երկրների հավաքականների կազմերում: Նման խաղացողներով համալրված թիմերը հանդես են եկել խոշոր մրցաշարերում եւ բարձր տեղեր զբաղեցրել:

Այս անգամ հիմնվելով էլիտ-ռաունդի խմբում մեր մրցակից երկրների՝ Պորտուգալիայի եւ Ֆինլանդիայի բողոքների վրա՝ ՈՒԵՖԱ-ն ուսումնասիրել է ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի հավաքականի կազմում հանդես եկող բրազիլացի ֆուտբոլիստների՝այդ թիմերում խաղալու իրավասությունը եւ տեխնիկական պարտություններ գրանցել երկու երկրների հավաքականներին: Բողոք է ներկայացվել նաեւ Ռումինիայի հավաքականի դեմ»,- հայտնում է ՀՖՖ-ն:

ՀՖՖ-ն բողոքարկել է այդ որոշումը եւ հարցը բարձրացրել ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի կոմիտեում: Հայաստանի ներկայացուցիչը կոմիտեի նիստին առաջարկել է, որ բոլոր ֆուտբոլիստները, որոնք արդեն իսկ խաղացել են հավաքականների կազմերում մինչեւ բողոքը, իրավունք ունենան շարունակել ելույթներն իրենց ընտրանիների կազմերում, իսկ նմանատիպ որոշումը տարածվի միայն այն խաղացողների վրա, ովքեր հավաքական կհրավիրվեն 2024թ. հունվարի 1-ից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել են մեքենայի փաստաթղթերը: Մեքենան 2006թ. արտադրության է՝ ՍԱՄԵ-603 ,գույնը՝ կարմիր, շարժիչը՝ 3I12956H6, ամրաշրջանակը՝ գործ N C1256IH6:

Սեփականատեր՝ Աթանես Բակուրի Հովհաննիսյան:

● *Դեկտեմբերի 24-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «...Եվ նորից գարուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Արդյոք հնարավո՞ր է գրանցման/վերագրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ առանց գործակալություն ֆիզիկապես ներկայանալու:

Արամ Ստեփանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման հավելված 2-ի համաձայն՝ հասարակական կազմակերպությունների պետական գրանցման, փոփոխությունների պետական գրանցման կամ պետական գրանցման մերժման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորն իրականացնում է դիմողի նույնականացման, պետական տուրքի գանձման, փաստաթղթերի ընդունման, փոխադրման եւ հանձնման գործառույթներ:

Իրավաբանների հայկական ասոցացիա

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերոնշյալ որոշման հավելված 1-ով սահմանված է օպերատորների ցանկը, որոնք են՝

1. «ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերություն
2. «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
3. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
4. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
5. «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
7. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
8. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
9. «ՄՈԲԻ ԴՐԱՄ» փակ բաժնետիրական ընկերություն
10. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն:

Հետեւաբար փաստաթղթերը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն հնարավոր է ներկայացնել վերոնշյալ ընկերությունների գրասենյակների միջոցով:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որտե՞ղ կարելի է ստանալ մասնագիտական կողմնորոշան ծառայություններ:

Սարգիս Առաքելյան (51 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե աշակերտ եք, մասնագիտական կողմնորոշան ծառայություններ կարող եք ստանալ դպրոցում (հանրակրթական ուսումնական հաստատությունում), իսկ եթե ուսանող եք, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական (Ն(Ա)ՄԿ) կամ բարձրագույն ուսումնական հաստատության կարիերայի կենտրոնում:

Միասնական սոցիալական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե աշխատանքի հարցում դեռեւս հստակ կողմնորոշում չունեք կամ վերամասնագիտացման, վերաորակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարվելու կարիք ունեք, մասնագիտական կողմնորոշան ծառայություններ կարող եք ստանալ միասնական սոցիալական ծառայության զբաղվածության կենտրոններում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վարդենիսցի պատանի քամանչահար Սամվել Զաքոյանը հաղթող է ճանաչվել մոսկովյան միջազգային փառատոնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-7 -4 -2 +1
Կոտայքի լեռներ	-9 -14 0 -2
Կոտայքի նախալեռներ	-5 -8 +2 +4
Գեղարքունիք	-10 -14 -2 +2
Լոռի	-7 -12 +10 +12
Տավուշ	-3 -8 +4 +8
Արագածոտնի լեռներ	-10 -15 -1 -3
Արագածոտնի նախալեռներ	-4 -6 +2 +5

Արարատ	-4 -6 +5 +7
Արմավիր	-5 -8 +4 +6
Վայոց ձորի լեռներ	-10 -13 -1 -3
Վայոց ձորի նախալեռներ	-4 -6 +5 +7
Սյունիքի հովիտներ	-5 -8 +4 +6
Սյունիքի նախալեռներ	-6 -10 +2 +5
ԼՂՀ	-4 +1 0 +1
Երեւան	-4 +1 +1 +2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*